Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

379

ԵԱՊՕՆԻԱ

Կազմիչ

Ի. ԽԱՉԱՏՐԵԱՆ

№ 8

Գին 1 ՅԱՌ.

91(52)
Ի-23

1904

ՏՊԱՐԱՆ
Ս. ԳԱՐԳԱՆԵԱՆՑԻ

21483

91(52)
Ի-28

10 NOV 2011

ԵԱՊՕՆԻԱ

379

Կարմից

Խ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

1004
18183

ՀՍՍՀ ԳՐԱԽՈՍ ՕՐԻՈՐԴ. * ՍՈՍԻԻ ՈՒԹՓԻՆԵԱՆ * ՍՈՒԹ. ԴԱՍ. ՄԻՋՆԱԴԱՐԴ

Հ.Ս.Խ.Հ. ԳՐԱԽՈՍ ՕՐԻՈՐԴ. ՍՈՍԻԻ ՈՒԹՓԻՆԵԱՆ
ՍՍՀՄ Ազգային գրքի պալատ
7/XI - 1922
ՄՈՍԿՎԱ, Խաչատուրյան
Ա. ՄԱՍ. ԻՍՅԱՆԻ ՁԵՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մոսկս Վարդանեանցի
1904

0 1 JUN 2013

Доз. Цензурою 20 Февраля 1904 г. Тифлисъ.

ԵԱՊՕՆԻԱ

Եապոնիան ասիական անկախ թագաւորութիւններից միակն է, որ ինքնակամ ու դիտակցօրէն ընդունել է եւրոպական կրթութիւն և կազմակերպութիւն:

Եապոնիայի տարածութիւնն է 417,396 քառ. կիլոմետր՝ *) 46 միլլիոն բնակչով, որոնք ապրում են երեքհազարից աւելի կղզիների և կղզեակների վրայ: Կղզիներից չորսը՝ Նիպպոն, որ Եապոնիայի մայր հողն է, Սիկոկո, Կիուսիու և Իեսո մեծեր են: Բոլոր կղզիներն ասիայի արեւելեան ափերով սկսած Կամչատկա թերակղզուց ինչպէս շղթայ ձգւում են դէպ հարաւ մինչև Ֆորմոզա կղզին. Ֆորմոզան ևս 1894—1895 թւի վերջին չին-եապոնական պատերազմից յետոյ անցաւ Եապոնիայի տիրապետութեան ձեռքը:

Արևմուտքից Եապոնիային հարևան են ասիական Ռուսաստանը, Կորէան և Չինաստանը: Եապոնացիներն իրենց հայրենիքն անւանում են «Նիպպոնա», որ նշանակում է «երկիր արևի ծագման». պատճառն այն է, որ Եապոնիան արևելք է ընկած և արևի առաջին ճա-

*) Կիլոմետրը ռուսական 1 վերստից 31 սաժէն պակաս է:

Հրկիսիմեան Դարան

ռագայթները նրա վրայ են ընկնում։

Եապոնական կղզիները լեռնոտ են, չկան ընդարձակ հովիտներ և մարգագետիններ, սարերի մեծ մասը հրաբղխային են ու պատկանում են հանգչող հրաբուղխների շարքին։ Եապոնիայում այժմ ևս կան դեռ շատ գործող հրաբուղխներ՝ երբեմն մոխիր և լաւա արձակողներ և երբեմն միայն քար ու ծծմբային գոլորշի ու գրանցից էլ գոյացել են առողջարար ծծմբային աղբիւրներ։ Եապոնիայում էլ կան բարձրագիր սարեր, օր. Ֆուզիամա սարը, որ Տօկիո մայրաքաղաքի կողքին է, ունի չորս վերստ բարձրութիւն և գագաթը ծածկուած է մշտական ձիւնով։ Այս սարը նշանաւոր է եապոնացիների համար. նրանց կարծիքով սրա գագաթին գտնւում է աստուածներից մէկի բնակարանն ու տարուայ որոշ ժամանակում խմբւում են այստեղ բազմաթիւ երկրպագողներ։ Ֆուզիաման մի գեղեցիկ սար է, դաշտի վրայ կոնաձև բարձրացած. նրա ձիւնապատ գագաթը թագնուած է ամպերի մէջ։

Բացի այդ հրաբղխային լաւաներից, լինում են և ստորերկրեայ ցնցումներ։ 1000 այդպիսի թեթև հարուածներ են պատահում տարուայ մէջ, 1896 թ. ստորերկրեայ սաստիկ հարուածից գոյացող ծովային ալիքը փլատակեց 5000 տուն և ոչնչացրեց 30,000 հոգի։

Եապոնիայի կլիման և հողն այնչափ բարեյաջող են երկրագործութեան համար, որ այս երկիրն արագօրէն ծաղկում ու հարստանում է։ Այս կղզիների կլիման համեմատած իր

հարևան Չինաստանի և Ռուսաստանի հետ՝ առաւելութիւն ունի, չնայած որ եապոնական նեղ ծովով է բաժանուած։ Ցայտնի է առհասարակ՝ ծովային կլիման սակաւ փոփոխուող է. աւելի համաչափ, քան ցամաքայինը։ Այսպէս և Եապոնիան, որ պատած է ջրերով և խոնաւ մթնոլորտ ունի. ովկիանոսի գոլորշիով կշտացած՝ կլիման աւելի մեղմ է, քան հարևան մայր ցամաքինը։ Մէկ էլ որ Եապոնիայի արևելեան ափերի երկարութեամբ հարաւից, հասարակածից փչում են ծովային տաք քամիներ և տաքացնում օդը։ Այս հոսանքը մօտ 70 վերստ լայնութիւն ունի։ Բնական է, որ ափերի կլիման փոխում են։ Այս իսկ պատճառով Չինաստանի Պեկին մայրաքաղաքում ձմեռը լինում է այնպէս դաժան, ինչպէս օրինակ Կիևում. իսկ Եապոնիայի Տօկիո մայրաքաղաքը, որ գտնւում է համարեա միևնոյն աշխարհագրական պայմաններում, եկած ձիւնը մի քանի ժամից յետոյ հալչում է։

Առատ անձրևներ, բարեխառն ձմեռն, ամառուայ խոնաւութիւնն և հողի լաւ յատկութիւնը պարգևել են Եապոնիային չտեսնուած հարուստ և փարթամ բուսականութիւն։ Միւս կողմից բնակիչների քրտնաջան աշխատութեան շնորհիւ Եապոնիայում ամեն տեղ մշակուած է, մինչև անգամ սարերի գագաթներ ու խոռոչները։ Վայրի գազաններ շատ քիչ են։ արջեր, գայլեր համարեա չկան. կան մանր աղուէսներ և կապիկների մանր տեսակը։ Զանազանակերպ և շատաքանակ թռչուններ Եա-

պոնիայում աւելի պակաս են, քան մայր ցամաքի վրայ։

Մինչև 19-րդ դարու կէսը Եապոնիան Եւրոպային անյայտ մի երկիր է եղել, թէև միջին և յետագայ դարերում փորձեր են եղել յարաբերութիւն ունենալ հետները. իսկ 19-րդ դարի կիսից սկսում է կանոնաւոր առևտրական յարաբերութիւն Եւրոպայի հետ և օրէցօր արագօրէն ծաղկում։ Այժմ Եապոնիայի ծովափնեայ քաղաքներում ապրում են եւրոպացիներ և կան եւրոպական թաղեր։ Եապոնացիները կարճ միջոցում շատ օրինակներ են վերցրել եւրոպացիներից և վերջիններիս համար էլ կան եապոնացիներից սովորելու բաներ, օր. աշխատասիրութիւն, բարեսրտութիւն ու մաքրասիրութիւն։

Եապոնացիները մի բարքի և սովորութեան տէր ժողովուրդ են. խօսում են մի լեզուով, առանց բարբառների. իրրև միաբան, միասիրտ ժողովուրդ՝ գիտակցաբար են գործում և անկեղծ սիրով կապուած են հայրենիքի հետ։

Եապոնացիները կարճահասակ են։ Նրանց դիմագծերին և մորթու գոյնին նայած՝ նրանց կարելի է բաժանել ստորին և բարձր դասակարգերի։ Ստորին դասակարգը գիւղացի երկրագործներն են—եապոնիայի ընիկների սերունդը, սրանց դէմքը լայն և տափակ է, այտերը սղմուած, քիթը տափակ, բերանը կիսաբաց և աչքերը կանոնաւոր։ Իսկ բարձր, նորեկ, նուաճող, արիստոկրատ տոհմի մորթի գոյնը սպիտակ է, մարմինը աւելի ճկուն, թոյլ. գլուխն երկար, ճակատը բարձր, դէմքի շրջանակը ձուաձև, այտերը քիչ սեղմուած. արծուաքիթ, շրթունքները բարակ, աչերը շեղ՝ չինացիների նման։

Եապոնացի կանայք բաւական գրաւիչ են և ինքուշ վարմունքով։ Բարեսրտութիւնը, բարեացակամութիւնն և քնքշութիւնն եապոնացու բնաւորութեան յատկանիշներն են։ Դասակարգերը միմեանցից չեն խորշում, բարձրադիր անձն գիտէ քաղաքավարի վարուել ստորին դասակարգի հետ։ Եապոնացիները կտրիչ են, ժուժկալող, կարգապահ և մաքրասէր։

Եապոնացիների ազգայնական տարազը գրաւիչ է. կանայք և մարդիկ հագնում են մետաքսեայ երկար խալաթ՝ լայն գոտիով՝ մարդկանցը նեղ և սև, կանանցը շորս արշին երկարութեամբ և մի արշին լայնութեամբ՝ պայծառ թանգագին կտորից. գոտին կապում են երկտակ և յետևում գեղեցկաձև հանգոյց ձևակերպում, որ մի առանձին գրաւչութիւն է տալիս եապոնացի կնոջը։ Եապոնացիները հագնում են փայտեայ կամ ծղոտէ ներբանների ոտնամաններ. գլխարկ չեն ծածկում, միայն շոգ ժամանակ արևից պաշտպանուելու համար կրում են հովանոցաձև մետաքսէ կտոր, կամ իւղոտ թղթից և կամ հնդկեղէգից՝ ծայրերը թելերով կղակի տակ կապած։ Վերջին ժամանակներս պալատական տիկնայք սկսել են հագնուիլ եւրոպական տարազ։ Բարձր դասակարգի մարդիկ ևս հետզհետէ թողնելով ազ-

գայնականը՝ հագնում են եւրոպական հագուստ. իսկ բոլոր զինուորականներին և զօրքին պարտաւորեցուցիչ է եւրոպական հագուստը։

Եապօնացի կնոջ գլխի մազերի սանրուածքը շատ բարդ գործ է և ժամանակ խլող, ամբողջ չորս ժամ. ամեն օր ժամերը դրա վրայ չվատնելու համար, շաբաթը երկու անգամ է սանրւում և գիշերները քնում է առանց յետ անելու գլուխը և անկողին է մտնում ծոծրակից սկսած, իսկ ծոծրակը դնում յենարանի վրայ այնպէս, որ գլուխը չառնի բարձին և մազերը չփչանան։

Եապօնացին ընուիեան սաստիկ սիրահար է։ Տան տեղը ընտրում է նա հոսող ջրի, կամ ծովի ափին և կամ անտառին մօտիկ։ Եապօնական տները փայտից են, սովորաբար երկյարկանի և գեղեցիկ։ Տանիքը ծածկում են կղմինտրով. պատերի փոխարէն (թէ դրսի պատերն և թէ սենեակներինը) հագցնում են փայտէ շարժուող չրջանակներ՝ թղթով սոսնձած։ Գիշերները՝ ճրագները վառելիս՝ եապօնացու տները կարծես մի-մի մեծ գեղեցիկ թղթէ լապտերներ լինին։ Ընորհիւ այդ շարժուող փեղկերի՝ սենեակներն ամեն մի րոպէ կարելի է մեծացնել և փոքրացնել իրենց ցանկացածին պէս։ Զմեռը սենեակի մէջտեղը դրած է կրակարան։ Տարուայ բոլոր ժամանակը կրակարանում կարելի է գտնել տաք թէյ մեատղեայ թէյամանով. կողքին դրած է կարճ ծխամորճը ծխախոտի արկղով։ Հիւրերին այստեղ են ընդունում և հիւրասիրում

են թէյով և ծխախոտով։ Աթոռ չեն գործածում Եապօնիայում, նստում են յատակի վրայ, համարեա առանց կահկարասիքի են։ Յատակին փռուած է մաքուր փայլուն խսիր. նրա վրայ քնում, նստում, հանգստանում են։ Սենեակ մտնողները հանում են ոտնամանները հարկաւ։

Վերջին աղքատ եապօնացու տան առաջ կգտնէք փոքր այգի տեսակ-տեսակ ծառերով։ Մեծ այգիներ չկան այստեղ. այգում շինուած են ժայռ, լիճ, առուակ, ծառուղի, շաւիղ և այլն։

Եապօնացին, ինչպէս վերևում յիշուած է, ամեն բանում սիրում է մաքրութիւն։ Մաքուր է նրա տունը, այգին, տան առաջի փողոցը. նոյն իսկ յետին բանուոր-ածխագործը՝ մաքրասէր է։ Երեկոները ծովափնեայ գիւղերում կտեսնէք խմբերով մաքուր հագնուած երգող, պարող, զանազան գործիքներով նուագող երկսեռից զբօսնող երիտասարդներ։ Սրանց թիւումն են նաև ամբողջ օրով մրի մէջ կորած աշխատող ածխագործները։ Իւրաքանչիւր եապօնացու տանը պահւում է կիսատակառ՝ մշտական մաքուր ջրով լիքը, որի մէջ օրը մի քանի անգամ լուացւում են։ Հիւրերին ևս պատւում են լողարանով։

Եապօնիայի բարձր և ժայռոտ սարերում գրեթէ անկարելի է կառքով գնալ։ Ճանապարհորդում են երկու կամ չորս բեռնակիր մարդկանցով. իսկ բեռը բարձում են ձիաներին։ Քաղաքներում և արուարձաններում, ուր գե-

տինը հարթ է՝ փոքրիկ կառքը դարձեալ մարդիկ են քաշում։ Ջինրիկշան (քաշող մարդ) առանց հանգստանալու 4—5 վերստ ճանապարհ է կտրում։ Վճարը սակագնով է—մի րի (3½ վերստ) 6 կոպէկ։ Եապոնիայում բանուորը օրական կարող է 15 կոպէկով ապրել։ Ուրեմն՝ ամուրի Ջինրիկշան (մշակ, բեռնակիր), որպէս զի չմեռնի քաղցածութիւնից, ամենայն օր պէտք է կտրէ օրական մօտ 10 վերստ, նոյն իսկ շոգ ժամանակ 4—5 փութ ծանրութեամբ։

Եապոնացիները սակաւակեր են, սիրում են աւելի բուսեղէն և ձկնեղէն կերակուր. իսկ մշակի կերածն է սովորաբար եփած բրինձ։ Գալով խմիչքներին՝ Եապոնիայում բոլորովին գինի չկայ, տարածուած է աւելի օղի բրընձից պատրաստուած, այն էլ տաքացրած։ Եապոնացին սիրում է խմել առհասարակ կոմպանիայով—ընկերներով, տանը նա միայնակ բոլորովին չի գործածում. իսկ ընկերութեան մէջ դարձեալ նա չափաւոր է խմում, չի արբում. իսկ եթէ պատահի, այդպիսուն իսկոյն հեռացնում են, որ փողոցում ոչ ոք չտեսնէ։

Եապոնացի մարդիկ և կանայք ամենքը ծխում են, միայն չափաւոր, ծխում են մեծաղեայ բարակ չիբուխով, որ շատ քիչ ծխախոտ է տանում, այնքան որ թեթև բաւականութիւն ստանան։

Եապոնացիների մեծ մասը մինչև այժմ կռապաշտ է։ Ամենատարածուած կրօնը բուդդայականութիւնն է, որ անցել է Հնդկաստանից։ Այս կրօնի հիմնադիրը թագաւորական ցեղից Սակիա—Մունի ճգնաւորն է, որ յայտնի է Բուդդա անունով և ապրում էր 7-րդ դարում. իսկ կռատները գտնում են գեղեցկանիստ բլրների գագաթներին անտառների մէջ։

Կռքերին երկրպագութիւն տալը ժամանակակից լուսաւորուած եապոնացու հոգեկան պահանջներին չէր բաւարարել. ուստի 19-րդ դարու կիսից քրիստոնէութիւնն արագօրէն տարածւում է։

Եապոնացին առհասարակ լուսաւորութեան ուսումնածարաւ է։ Այդ ծարաւը պատուաստուում է նրա մէջ դեռ մանկութիւնից ընտանեկան յարկի տակ. սովորում է նա գրագիտութիւն, նուագածութիւն, մանաւանդ կանայք. 7—8 տարեկան հասակից երեխան ուղարկւում է ուսումնարան։ Օրէնքով 600 բնակչին ընկնում է մի ուսումնարան. այսպիսով ամենքը միջոց են ունենում սովորել և անգրագէտ կին կամ մարդ համարեա թէ չի գտնուի։ Բացի դրանից Եապոնիայում կան մօտ 400 միջնակարգ, բարձրագոյն հաստատութիւններ, որի մէջ է և Տօկիօի համալսարանը՝ 2500—3000 ուսանողով։ Շատերը շրջականալով Եապոնիայում ստացած գիտութեամբ՝ ուղևորւում են Եւրոպական համալսարաններ։ Այսպէս՝ Եապոնիայում շատ կան գիտնական անձինք, որոնք խօսում են զանազան լեզուներով և ուշադրութեամբ հետևում են թէ ինչ է կատարւում Եւրոպայում և ինչն է Եապոնիայի համար հարկաւոր։ Եապոնիայում հրատարակ-

ւում են շատ լրագրեր. ներկայումս այնքան են աւելացել, որ մինչև անգամ գիւղերում ևս սկսել են տպուել վիմագրական թերթիկներ։

Եապօնացիներն իրենց այբբենարանը չինացիներից են փոխ առել. նրանց տառերը շատ բարդ են և հնարիմաց. իւրաքանչիւր առանձին նշանը տառ չէ ցոյց տալիս, այլ ամփոփ հասկացողութիւն։ Կանոնաւոր գրագրումն ձեռք բերելու համար հարկաւոր է ամենապակաս 10,000 նշան իմանալ. չնայած այս դժուարութիւններին, սակայն դարձեալ եապօնացիների գրագիտութիւնն և կրթութիւնը ծաղկման է հասել։

Ժողովրդի լուսաւորութեան գործին մեծ զարկ է տալիս և թատրոնը Եապօնիայում։ Պիէսները սովորաբար պատմական բովանդակութեամբ են թագաւորների և հերոսների քաջագործութիւնից։ Եապօնացիների ներկայացումները շատ բաներում տարբերւում են եւրոպականից։ Մի դրամայի ներկայացումը մի քանի օր է տևում։ Սկսւում է ներկայացումը 9—11 ժամին առաւօտեան և տևում է մինչև արևի մայր մտնելը։ Հասարակութիւնը թատրոնում, ինչպէս տանը, նստած յատակի խսրի վրայ թէյ խմում, նախաճաշում, ծխում և միևնոյն ժամանակ շատ ուշադրութեամբ լսում է դերասաններին։ Բեմանկարները (դեկօրացիա) միայն յայտնի թատրոններում կարելի է տեսնել։ Խաղամիջոցներին (անտրակտ) լինում է նուագածութիւն, որին եապօնացին լսում է ուխտաժանքով։

Եապօնացին աշխատասէր է. հողն երկրագործութեան համար յարմար և կլիման գոհացուցիչ. ազգաբնակութիւնը շատ է, իսկ հողը սակաւ, դորա համար եապօնացին ժայռերն ևս փափկացրել է մշակութեան համար. նա արհեստական ամեն մի միջոց գործադրում է, որպէս զի հողից աւելի արդիւնք ստանայ։ Եապօնացին չի ցանում. այլ հատիկները անկում է շարքով և հնձում է տարին 2—3 անգամ, այնպէս որ նա բոլոր տարին գործում է, իսկ կենդանիների էլ պէտքութիւն չունի։

Եապօնիայի գլխաւոր բոյսերն են բրինձ, ցորեն, գարի, հնդկացորէն և սիսեռ։ Բրինձն երկրագործի գլխաւոր կերակուրն է—մի մարդուն երեք ֆունտ օրական։ Բացի յիշեալ բոյսերից Եապօնիան արտադրում է շերամ, թէյ և հնդկեղէգ։ Շերամն իր նրբութեամբ գերազանցում է եւրոպականից. թէյն իր լաւ տեսակով եթէ ոչ այժմ շուտ ժամանակով կարող է մրցել Չինաստանի հետ։

Եապօնիայում ընտանի կենդանիներ քիչ են։ Չի կենդանին բանացւում է բեռնակրութեան ժամանակ և մէկ էլ ձիաւոր զօրքի համար։ Գով և եղն հազուագիւտ են։

Բացի երկրագործութիւնից եապօնացիները հիւսիսային կղզիներում, ուր կլիման ցուրտ է և հողն երկրագործութեան համար ոչ այնքան յաջող, պարապում են ձկնորսութեամբ։ Որսում են նրանք մի վերստից աւելի երկար ուռկանով 70 հոգու օգնութեամբ, օրուայ մէջ երեք անգամ և հանում

են օրական մօտ 20,000 ձուկ։

Եպոնացիների աշխատասիրութեան շնորհիւ ամեն ասպարիզում, նրանց հայրենիքը օրստօրէ ուժեղանում և հարստանում է։ Հիմա հէնց Եպոնիայում քաղաքներ կան, որոնք բնակիչներով հաւասարւում են եւրոպական ամենամեծ քաղաքներին։ Տէրութեան Տօկիօ մայրաքաղաքը մօտ երկու միլիոն բնակիչ ունի։ Տօկիօում ձիաքարշ կառքեր շատ քիչ են, այդպէս և ձիաքարշ երկաթուղիները քաղաքի բոլոր թաղերը չեն տարուած, հաղորդակցութիւնն աւելի կատարւում է ջինրիկշաների միջոցով։ Տօկիօում գտնւում է ներկայ Մուցիկիտօ միկադօի (թագաւոր) պալատը։ Աքրունիքը շրջապատուած է բարձրադիր քարէ պարսպով, ուր բացի պալատականներից, հասարակ մահկանացուին անկարելի է տեսնել։ Տօկիօում կառավարչական ուրիշ հաստատութիւններ ևս շատ են։ Այստեղ եւրոպական քարէ շինութիւններ ևս կան։

Տօկիօ մայրաքաղաքը միացած է կղզու հեռաւոր ծայրի Կիօտօ հին մայրաքաղաքի հետ երկաթուղիով, որի երկարութիւնն է 600 վերստ։ Այս գլխաւոր գծից սկսւում են երկրորդական գծեր դէպ միւս քաղաքներն ամենայն ուղղութեամբ. սրանցով համարեա բոլոր քաղաքները միանում են մայրաքաղաքի հետ։ Մայրաքաղաքից 30 վերստ հեռաւորութեամբ ծովափում գտնւում է վաճառաշահ Իօկահամա նաւահանգիստը, որ սրանից 30 տարի առաջ մի աննշան ձկնորսական գիւղ էր. իսկ այժմ Եպոնիայի արտաքին վաճառականութեան կենտրոն է։ Իօկահամայի տեսքը ծովի կողմից տեսնողի վրայ եւրոպական քաղաքի տպաւորութիւն է թողնում. հարիւրաւոր եւրոպական առևտրական տներ ունի, տասնեակ հազարի չափ եւրոպացիներ և ամերիկացիներ ունին այստեղ հաստատուն տեղեր։ Պէտք է նկատել որ Եպոնիայում անգործ մարդ չի գտնուի, ազգաբնակ թէ միջակ դասակարգ պարապում են որ և է արհեստով։ Մեծ խանութներ չկան Եպոնիայում և իւրաքանչիւր արհեստաւոր տանն է ծախում իր ձեռքի արտադրութիւնը։

Եպոնական յախճապակին, մետաքսեայ ասեղնագործը, մետաղից և կրիայի ոսկրից պատրաստած անօթները, լայքան և վազերը մինէով (էմալ) պատած զոյնզգոյն նուրբ նկարներով ողջ աշխարհին են զարմացնում ու լուսաւոր աշխարհի զարգարանքի առարկաներ են։

Եպոնացու կեանքն եռուն-աղմկալի է, ամենքը գործի են՝ թէ տանը, թէ դուրսը։

Եպոնիայի բնութիւնն ուրախ և գեղեցիկ է. սքանչելի է նրա բուսականութիւնը. գեղեցկագիր վայրեր, որոնք քարշում են դէպ իրենց շատ տեղերից ճանապարհորդներ և շատերին էլ առևտրական նպատակներով։

Եպոնիայի առևտուրն օտար տէրութեանց հետ զարմանալի արագօրէն ծաղկում է։ Փոխարինում են թէյ, մետաքս, քափուրը և գեղարուեստական ձեռագործներ ու ստանում են մետաղներ, մանուֆակտուրական ապրանք

և այլ բաներ, որոնք իրենք չունին, կամ հազ-
ւագիւտ են։

Գալով հայրենիքի պաշտպանութեան
խնդրին հարկ եղած դէպքում օտար տէրու-
թեանց դէմ, Եպօնիան քնած չէ մնացել. նա
ժամանակին զինուեց նաւատորմիղով։ Ունի
100,000 ցամաքային զօրք և զինուորական
գեղեցիկ նաւատորմիղ։ Ամենքը, ովքեր ճանա-
չում են Եպօնիայի զօրքն և նաւատորմը,
միաձայն գովում են զինուորի խիստ կարգա-
պահութիւնը, քաջութիւնը և հայրենիքին անձ-
նուիրութիւնը։ Ապացոյց դրան եպօնացինե-
րի վերջին պատերազմը Չինաստանի հետ
Կորէան տիրելու համար, որովհետև իրենց
երկիրը փոքր է, ժողովուրդը շատ։ Կորէայի
փոխարէն ստացան Չինացիներից 100 միլիոն
ռուբլի և Ֆորմոզա կղզին։ Չինացիներից ստա-
ցած փողը գործադրեցին զօրքի ուժեղութեան
և պատերազմական նաւեր շատացնելուն։ Այժմ՝
արդէն եպօնական մարդատար նաւն երթևեռ-
կում է աղատօրէն Վլադիվոստոկ, Կորէա, Չի-
նաստան, Հնդկաստան, մինչև անդամ հեռաւոր
Անգղիա։

Այսպիսով եպօնական ժողովուրդն իրրև
մի կուլտուրական ազգ՝ ամենօրէն առաջադի-
մում և ծաղկման է հասնում ամեն տեսակէտ-
ով։

7/XI 1922

Հայաստանի Ազգային գրադարան
NL0420352

21483

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԹԱԹԱԽՄԱՆ ԳԻՇԵՐԸ, Լէօի, գինը 5 կ.
2. 26 ՏՂԱՄԱՐԴԵՒ 1 ԱՂՋԻԿ, Մակսիմ Գոյրկու, թարգ. Մուշէ վ. . 5 կ.
3. ԽԵՆԹԸ և ուրիշ պատմուածքներ, Վ. Փափազեանի . . . 10 կ.
4. ԿԵԱՆՔԻ ԴԱՄԸ, պատմուածք Ա. Ահարոնեանի . . . . . 5 կ.
5. ՍԳԻՏԱԿ ԾԱՂԻԿԸ Է. Օժէշկոյի թարգ. Զահվերդեանի . . . . 5 կ.
6. ԱՐՏԻՍՏԸ Զիլվանզադէի . . . 15 կ.
7. ԵՂՕՅԻ ՔՈՌ ԲԱԽՏԸ Զահրիարի 3 կ.
8. ԵԱՊՕՆԻԱ Խաչատրեանի . . . 3 կ.